1751 թ. հրատարակված քարտեզի նման այս «Աշխարհացույց»-ն էլ «...ըստ հին և նոր աշխարհագրաց» է, այսինքն հաղորդում է թե՛ պատմական և թե՛ այն ժամանակ գոյություն ունեցած աշխարհագրական տվյալներ։

Քարտեզի հիշատակարանը, որ զետեղված է ներքին մասում, շրջափակված է այլաբանական բնույթի նկարներով՝ պատկերված են մարտական դրոշներ, զենքեր ու երաժշտական գործիքներ։ Կենտրոնում քարտեզի վերնագիրն է՝ «Աշխարհացույց Հայաստանեայց», ձախ կողմում՝ նկարված են հայ ազգային հերոսներ՝ Հայկը, աղեղը ձեռքին, Արամը՝ տեգով զինված և ձեռքին ինչ որ առարկա՝ վրան գրված «Հայաստան», աջ կողմում Տիգրանն է, արքայական փոքրիկ գավազանով, և հետո՝ Տրդատը։ Բոլորն էլ ունեն համապատասխան մակագրություններ։

Այս նկարները քարտեզին գեղեցիկ տեսք տալու համար չեն արված միայն։ Մագրասցի հայրենասերները հայ երիտասարդությանը օտար լծի դեմ ապըստամբվելու կոչ անելիս հիշեցնում էին նրանց նախնիների հերոսական գործերն ու առանձնապես շեշտում «գեղապատշաճ, քաջագանդուր, խայտակն, անձնեայ և հաստաբազուկ» Հայկին, որն ուներ լայնալիճ, մեծակամար կամ լայնածոց աղեղ[5], և որը անկախություն նվաճեց իր ցեղի համար, Արամին, որի անունով մեր ժողովրդին «...անուանեցին Արմեն և զաշխարհս մեր՝ Արմենիա»[6], երկար տարիներ օտար նվաճողներից հայրենիքը հերոսաբար պաշտպանած «...ամենեցունց թագաւորացն և քաջացն մերոց հարստագոյն և խոհեմագոյն և քաջագոյն» Մեծն Տիգրանին[7] և վերջապես Տրդատին, որը «... ի ձեռն նորին Լուսաւորչի հաւատայ ինքն և զամենայն Հայաստանեայս դարձուցանէ ի Քրիստոնէութիւն»[8]։

Շ. Շահամիրյանը «Որոգայթ փառաց»-ում գրում է, թե «... որպէս լուաք ի բերանոյ բազմաց թէ ի մէջ հարիւր արանց հայոց հազիւ մի այր գտանի, զի լուեալ իցէ ի բերանէ յումեքէ, եթէ հայոց ժամանակս էին տէր և թագաւոր ի վերայ երկրին Հայաստանեայց» և շարադրելով այդ գիրքը ինքը նպատակ ունի հիշեցնել նրանց այդ ամենի մասին, որպեսզի «... կարելի լինիցի փրկել ազգն հայոց ի ծառայութենէ և արասցէ մեզ երջանիկ և վայելուչ որդէդրութեան նախահարց մերոց Հայկայ, Արամայ, Տիգրանայ և այլն»[9]։ Վերոհիշյալ անձանց նկարների զետեղումը հիշատակարանի երկու կողմերում, որ արված է անտարակույս Շ. Շահամիրյանի պատվերով, հետապնդել է այդօրինակ նպատակ՝ ոգեշնչել հայ երիտասարդությանը հայրենիքի անկախության համար մարտնչած հերոսների կերպարներով։ Այս տեսակետից ընորոշ են նաև հիշատակարանի վերևի մասը ծածկող զարդերը։ Դրանք, ինչպես արդեն նշեցինք, դրոշներ, զենքեր ու երաժշտական գործիքներ են, որ խորհրդանշում են ապստամբություն, զինված պայքար՝ հանուն հայրենի երկրի ազատագրման։

Հիշատակարանում ասվում է հետևյալը.

«Փորագրեալ արդեամբք աղայ Շամիրի,
Մեծի Շամիրեանց տանէն պանծալի,

---

5 Նոր տետրակ, որ կոչի յորդորակ, Մագրաս, 1772, էջ 57—58։
6 Նույն տեղում, էջ 61։
7 Նույն տեղում, էջ 65։
8 Նույն տեղում, էջ 85։
9 Որոգայթ փառաց, Մագրաս, 1774, էջ 124։